

Մարզպետ Սարգիս Սահակյանն այցելեց Նոր Արթիկ եւ հանդիպեց բնակչության հետ

Մայիսի 18-ին Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանն այցելեց Նոր Արթիկ եւ հանդիպեց տեղի ղեկավարության, ինչպես նաեւ բնակչության հետ: Գյուղացիները գոհունակությամբ արտահայտվեցին կառավարության կողմից տրամադրվող պարարտանյութի, դիզվառելիքի եւ սերմացուների տրամադրման կապակցությամբ եւ նշեցին, որ արդյունքում նրանք լավ բերք են ստացել եւ նույնը ակնկալում են այս տարի: Այդ ամենը մարզպետը տեղում ականատես եկավ՝ այցելելով դաշտեր:

Սարգիս Սահակյանը եղավ նաեւ համայնքային գրադարանում: Այստեղ նա մասնակցեց նորերս վերանորոգված գրադարանի բացման եւ 2007 թվականին զոհված զինծառայող Սամվել Մարգարյանի անվամբ գրադարանի անվանակոչության արարողությանը: Նկատի ունենալով, որ նորաբաց գրադարանը ունի գույքի կարիք, մարզպետը այդ հարցով դիմեց ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանին: Վերջինս նպատակահարմար գտավ հարցը քննարկել եւ գրադարանին աջակցել համապատասխան գույքի տրամադրմամբ:

Այնուհետեւ մարզի ղեկավարին իրենց անձնական հարցերով դիմեցին բնակիչները: Մասնավորապես, հաշմանդամության կարգ ունեցող 3 դիմումատուի մարզպետի կողմից հատկացվեց Ջերմուկի առողջարանի ուղեգիր, 2 հոգի էլ բժշկական անվճար հետազոտություն կանցնեն Թալինի բժշկական կենտրոնում: Մարզպետի հանձնարարությամբ լուծվեց նաեւ Երեւանի պետական համալսարանի 1 անվճարունակ ուսանողի ուսման վարձի հարցը:

Սարգիս Սահակյանը պատասխանեց նաեւ բնակիչներին հուզող այլ հարցերի, տվեց անհրաժեշտ պարզաբանումներ: